Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ կետը.

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2017 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N 1269-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) ուժը կորցրած ճանաչել որոշման հավելվածի 7-րդ, 8-րդ և 17-րդ կետերը.

2) 45-րդ կետից հետո որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 46-րդ, 47-րդ և 48-րդ կետերով.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն				
46.	ՀՀ կառավարություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ՀՀ պետական բյուջեի ծախսերի իրականացմանն ուղղված գործունեության, արտաբյուջետային միջոցների գոյացման ու օգտագործման ճշտության ստուգում	2014-2016 թթ. և 2017 թ. հաշվետու ժամանակաշրջան
47.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայություն	ՀՀ պետական բյուջեի ծախսերի իրականացմանն ուղղված գործունեության, արտաբյուջետային միջոցների գոյացման ու օգտագործման ճշտության ստուգում	2014-2016 թթ. և 2017 թ. հաշվետու ժամանակաշրջան
ՀՀ կառավարությանը առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն				
48.	ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	Պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասին համապատասխանող շահութաբաժինների հաշվարկման և ժամանակին ՀՀ պետական բյուջե վճարման ճշտության ստուգում	2014-2016 թթ. և 2017 թ. հաշվետու ժամանակաշրջան